ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԵՈՐԳ ԱՐՄԵՆԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՏԵՍԼԱԿԱՆ)

Հարգելի գործընկերներ, ինչպես գիտենք, Փաստաբանների պալատի խորհուրդը Փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմին է: Հերթական ընտրությունները նախատեսված են սույն թվականի փետրվարի 11-ին: Խորհրդում իմ թեկնածությունն է առաջադրել փաստաբան Ստեփան Ոսկանյանը, որին ես տվել եմ համաձայնություն: Խորհրդի աշխատանքները բավականին ծանրակշիռ են և էական դեր ունեն ինչպես փաստաբանների պալատի կազմակերպչական և կառավարչական հարցերում, այնպես էլ յուրաքանչյուր փաստաբանիս անկախ փաստաբանական գործունեության իրականացման ապահովման համար, որն արդյունքում նպատակ պետք է հետապնդի երաշխավորելու փաստաբանի անկախությունը, անաչառությունը և մասնագիտական գիտելիքների դրսևորմամբ մեր վստահորդների շահերի ներկայացումը և իրավունքների պաշտպանությունը:

Նախ հակիրճ ասեմ, որ շուրջ 10 տարուց ավելի է, ինչ՝ որպես փաստաբանների պալատի անդամ, իրականացնում եմ միմայն փաստաբանական գործունեություն, սակայն 2001թ-ից սկսած իրականացնում եմ շահերի պաշտպանություն և ներկայացուցչություն ինչպես դատական, այնպես էլ արտադատական մարմիններում: Շուրջ հինգ տարի լինելով նաև կարգապահական վարույթներով նախապատրաստող փաստաբան, անձամբ առերեսվելով բազմաթիվ փաստաբանների փաստաբանական գործունեությամբ պայմանավորված և կապակցված խնդիրների հետ՝ դրանց առնչությամբ հավաքագրել եմ բազմաթիվ փաստեր և ներկայացրել խորհրդին:

Քանի որ փաստաբանների պալատի կանոնադրությամբ հստակ ամրագրված են խորհրդի գործունեության իրականացման լիազորությունները և վերջիններիս առնչվող բոլոր հարցերը, ապա դրանց չեմ անդրադառնա, այլ հակիրճ կներկայացնեմ իմ տեսլականը խորհրդում անդամի գործունեության վերաբերյալ:

Խորհրդում գործունեության իրականացման համար ընդհանուր սկզբունքները իմ պատկերացմամբ հետևյալն են՝

1. Խորհրդի անդամի անկախությունը ցանկացած իրավիճակում, հակառակ պարագայում խորհրդի անդամը պարտավոր է հրաժարվել անդամությունից,
2. Խորհրդի անդամի բարձր մասնագիտացված ունակությունները կազմակերպչական և կառավարչական հարցերում, քանզի հանդիսանում է փաստաբանների պալատի գործադիր մարմնի անդամ,
3. Փաստաբանական գործունեության իրականացման բնագավառում առկա խնդիրների և/կամ հնարավոր խնդիրների առաջացման մասին խորհրդի անդամի կողմից իրազեկ լինելու շահագրգռվածությունը և այդ հարցերի բարձրաձայնումը խորհրդում:

Կարծում եմ, որ այդ սկզբունքներից շեղումները կարող են բացասական անդրադառնալ ՀՀ փաստաբանների պալատի գործունեության վրա և առնվազն չեզոքություն պահպանել յուրաքանչյուր փաստաբանիս փաստաբանական գործունեության հարաբերություններում խնդիրների լուծման մեջ, ինչն և նպաստավոր չէ ՀՀ-ում փաստաբանի անկախության, օբյեկտիվության, անաչառության և բարձր մասնագիտացված պատրաստվածության համար:

Ես անձամբ խորհրդում իմ գործունեությունը պատկերացնում եմ նման սկզբունքների պահպանմամբ, ինչն ուղղակիորեն բխում է փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբանների, այդ թվում իմ՝ որպես փաստաբանական գործունեություն իրականացնող անձի, շահերից: Իհարկե, սա չի նշանակում, որ միայն այդ սկզբունքներն են, որոնք պետք է

ուղեկցեն խորհրդի անդամին, քանզի բազմաթիվ են նաև նրանք, որոնց բովանդակությունը հանգում է փաստաբանի անկախությանը, անաչառությանը և մասնագիտական պատրաստվածությանը, ինչի հետ կապված՝ յուրաքանչյուր փաստաբանի՝ որպես խորհրդի անդամի, տեսլականը կարող է տարբերվել:

Իմ տեղեկացմամբ առկա են բազմաթիվ փաստաբաններ, որոնք չեն իրականացնում փաստաբանական գործունեություն: Դա իրապես չունի որևէ բացասական ազդեցություն և իրավական արգելք, սակայն կարծում եմ, որ պետք է հնարավորինս խրախուսվի փաստաբանական բովանդակային և/կամ ակտիվ գործունեությունը և անցկացվի որոշակի վիճակագրություն, ինչի արդյունքում փաստաբանները կխրախուսվեն ոչ թե որպես ՀՀ փաստաբանների պալատի անդամության, այլ փաստաբանական գործունեության իրականացման համար: Մենք գիտենք, որ կան և կլինեն նաև բազմաթիվ իրավաբաններ, ովքեր օրենքի թույլատրելի սահմաններում իրականացնում են և կիրականացնեն իրավապաշտպան գործունեություն, ովքեր տարբեր մարմինների և հասարակության կողմից գնահատվում են և կգնահատվեն միայն բովանդակային գործունեության համար: Ահա այս հանգամանքով պայմանավորված՝ փաստաբանների պալատի անդամությունը պետք է խրախուսվի բովանդակային և ակտիվ գործունեության համար, այդ թվում՝ ուսումնական ոլորտում, քանի որ միայն ակտիվ փաստաբանական գործունեության առկայության պայմաններում է հնարավոր համակարգված ձևով վերհանել խնդիրները և միջոցներ ձեռնարկել դրանց լուծման համար, հակառակ պարագայում առնվազն կլինի չեզոքություն, ինչն էլ նպաստավոր չէ փաստաբանական գործունեության համար:

Խորհրդում անդամությունը, ինչպես գիտենք, չի վարձատրվում, ինչը, բնականաբար, պետք է զուրկ լինի որևէ նյութական շահագրգռվածությունից, ավելին՝ այն էլ ավելի պետք է բարձրացնի պատասխանատվությունը՝ քանզի խորհրդի անդամի գործունեությունը տեղափոխվում է ՓՊ անդամների տեսանելիության դաշտ, որոշ դեպքերում՝ նաև հանրային ոլորտ:

Ինչ վերաբերում է խորհրդի անդամության դեպքում կոնկրետ քայլերի իրագործմանը, ապա սույն դեպքում ձեռնպահ եմ մնում նման հարցերի ներկայացմանը, քանզի միակ և հիմնական քայլն իմ կողմից լինելու է վերը նշված սկզբունքների պահպանմամբ իրականացվող գործունեությունը, ինչի արդյունքում այն պետք է բխի փաստաբանների կողմից առաջ քաշված և ներկայացված խնդիրների լուծումներից, որոնք կարող են դրսևորվել այս կամ այն իրավական ակտերի փոփոխությունների, փաստաբանների համար արտոնությունների, կոնկրետ գործերով հայտարարությունների, որոշումների և այլ գործողությունների կատարման նախաձեռնություններով:

Խորհուրդը կոլեգիալ մարմին է՝ բաղկացած 12 անդամից՝ չհաշված ՓՊ նախագահից, այդ իսկ պատճառով յուրաքաչյուր խորհրդի անդամ պետք է առավել քան պատասխանատու լինի այս կամ այն հարցի վերաբերյալ իր տված ձայնի համար, ինչի ներքո էլ ընկած է իր՝ որպես խորհրդի անդամի, ողջ գործունեությունը, անկախությունը և պատասխանատվությունը:

Նախընտրական ծրագիրը ձևակերպվել է 20.01.2017թ.

Հարգանքով՝

ՀՀ ՓՊ խորհրդի անդամի թեկնածու

Փաստաբան Գևորգ Դավթյան